ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

29.03.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-1 ծածկագրով Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի

ք.Երևան «25» հուլիս 2017թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 29.03.2017թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «8400000 (ութ միլիոն չորս հարյուր հազար)» թվերն ու բառերը փոխարինել «9240000 (ինը միլիոն երկու հարյուր քառասուն հազար)»:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «օգոստոս», «սեպտեմբեր», «հոկտեմբեր», «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակների թվերը փոխարինել «9,240,000» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00873228
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ info@flashmotors.am
	Հեռ. (060)522555, (091)522855
/ Դ.Բեգլարյան /	/ Ա. Ասրյան /
L.S.	L.S.